նայն գիւղական բարեաք լեցուն էր պատուական երէցփոխանին սեղանը. ճարտարախօս երեցփոխանուհին առջևս դնելով սերին պնակը, լիաբերան և առատասիրտ կերպով, — « Կեր, հայր սուրբ կ'ասէր. ձեզի համար փնտռել տուի գեղին մէջ այս սերը, մեր գոմէշները այսօր չկթուեցան »։ Հիւրընկալ տանտիկնոջ մարդասէր և քաղցր ընդունելութեան համեմատ գտայ ես այն սերը, համեղաճաշակ և արժանի համբաւոյ։ Սեղանի միջոց մեր խօսակցութեան գլխաւոր նիւթն Ղրիմն և նորա գեղրանքն էին, զոր ախորժելով մտիկ կ'անէին բարեպաշտ ասպնջականք։ Հարիւր տարին անցել է՝ որ սոցա պապեր թողել գնացել են Ղրիմէ, այլ որդւոց որդի դեռ ևս վառ պահած են կորուսեալ հայրենեաց յիշատակը. Ղրիմ ասելու միջոց՝ մասնաւոր կերպով կը շեշտեն Նախիջևանցիք։

Յետ երկար խօսելու, շհամբերեց ևս տանտիկինն, և հարցական ձևով աւելցուց, — « Այս ինչ է, որ այս հայր սուրբին ամէն կալաճին տեղովը կը հասկցուի. այդ ինչպէսնակ բան է »։ — Այդոր պատճառը այն է, գրուցեցի, որ մենք ամէնքս Անեցի հայեր ենք, ու կալաճիներս մէկ »։ « Այդպէսնակ ասա », աւելցուց պառաւը գոհութեամբ սրտի։ Բարեպաշտիկ պառաւը՝ միայն 'ի Հայաստանէ եկող արևելեան վարդապետներ տեսնելով, անշուշտ այս գաղափարը ստացել է, որ վարդապետաց իմաստուն խօսակցութիւնքը կէսիկէս պէտք է անիմանալի լինին հասարակ մահկանացուաց։

Ընդունելութիւնը սիրալիր, խօսակցութիւնը զըւարթ. այլ հարկ էր ինձ առաջ գնալ 'ի Նիսվիթա գիւղ, որ եօթն վերստիւ հեռու է 'ի Սալայէ։ Ցե-